Իրավաբանական ծառայության ավագ իրավախորհրդատու

Աշխատանքի նկարագրություն

Բանկի ընթացիկ գործունեության սպասարկում, Ֆինանսական համակարգի հաշտարարից ստացված պահանջների քննություն:

Աշխատանքային պարտականություններ

- Բանկի բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ քաղաքացիաիրավական պայմանագրերի (աշխատանքային, առուվաճառքի, վարձակալության, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման և այլն) պատրաստում, փոփոխում, դիտարկում, լրամշակում և նշագրում
- Բանկային գործառնությունների հետ կապված պայմանագրերի (վարկային, գրավի, երաշխավորության, երաշխիքի, ավանդային, քարտային, բանկային հաշվի և այլն) պատրաստում, փոփոխում, դիտարկում, լրամշակում և նշագրում
- Բանկային պրոդուկտների մշակման, ներդրման, փոփոխման, դադարեցման ընթացքում իրավական խորհրդատվության տրամադրում, այդ թվում՝ գործընթացը կանոնակարգող ներքին իրավական ակտերի, պայմանագրերի, այլ անհրաժեշտ փաստաթղթերի կազմում, դիտարկում, լրամշակում, իրավական եզրակացությունների տրամադրում
- Հաճախորդների սպասարկման ընթացքում առաջացող իրավական հարցերի պարզաբանում, այդ թվում՝ փաստաթղթերի փաթեթի ուսումնասիրություն, իրավական եզրակացությունների տրամադրում
- Բանկի ներքին իրավական ակտերի (կարգեր, ընթացակարգեր, կառավարչական ակտեր, ուղեցույցներ, հրամաններ, որոշումներ, հանձնարարականներ, հրահանգներ և այլ կազմակերպչական փաստաթղթեր) նախագծերի նախապատրաստում՝ ինքնուրույն կամ մշակման աշխատանքներում մասնակցություն, ներքին իրավական ակտերի և ներկայացված այլ փաստաթղթերի, դրանցում փոփոխությունների կատարման կամ ակտերն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ եզրակացությունների տրամադրում, օրենսդրական փոփոխություններով պայմանավորված՝ ներքին իրավական ակտերում և այլ փաստաթղթերում փոփոխությունների նախաձեռնում
- ՀՀ Կենտրոնական բանկից, Բանկերի միությունից, փաստաբաններից, նոտարներից և այլ պետական մարմիններից, կազմակերպություններից, ֆիզիկական անձանցից ստացված գրությունների դիտարկում, ըստ անհրաժեշտության պատասխանների նախագծերի նախապատրաստում՝ ինքնուրույն կամ մշակման աշխատանքներում մասնակցություն

- Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակից ստացված պահանջների քննություն, պատասխանների նախապատրաստում, բանակցությունների վարում
- Բանկի մասնաճյուղերին և կառուցվածքային ստորաբաժանումներին իրավական խորհրդատվության տրամադրում
- Բանկի վրա ազդող իրավական ռիսկերի բացահայտում, ամփոփում, վերլուծում և համապատասխան կանխարգելմանն ուղղված միջոցառումների նախագծերի առաջարկում

Անհրաժեշտ պահանջներ

- Բարձրագույն իրավաբանական կրթություն (դիպլոմավորված իրավաբան, մագիստրոսի կոչումը ցանկալի է և կդիտվի որպես առավելություն)
- Ֆինանսական կազմակերպություններում առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ որպես իրավախորհրդատու
- Բանկային գործունեությունը կարգավորող օրենսդրական և նորմատիվ իրավական ակտերի իմացություն
- Քաղաքացիական, աշխատանքային, բանկային, կորպորատիվ իրավունքի գերազանց իմացություն
- Վերլուծական հմտություններ
- Թիմային աշխատանք
- Բանակցություններ վարելու հմտություններ
- Ծանրաբեռնվածության պայմաններում արագ աշխատելու ունակություն
- Համակարգչային գիտելիքներ՝ MS Word, Outlook, այլ ծրագրերի իմացությունը կդիտվի որպես առավելություն
- Ռուսերեն և անգլերեն լեզուների լավ իմացություն

Դիմելու ընթացակարգը

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hr@armbusinessbank.am հասցեին:

Վերջնաժամկետ՝ 05.10.2023թ.:

Խնդրում ենք նամակի թեմա (subject) դաշտը լրացնել նշելով պաշտոնը և Ձեր անուն, ազգանունը հետևյալ կերպ՝ "**Senior Legal Advisor – Name, Surname**":